

Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՎԱՐԱՔԱՂԻ «ՍՈՍ» ՏԵՂԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վարաքաղյան տեղանունները կամ դրանց բառարմատները գիտական հետազոտման կարիք ունեն։ Հավակնություն չունենալով սույն շարադրանքում մանրանալ դրանցում կանգ առնենք մեկի վրա։

Այսպես, բիայնական արձանագրություններում բազմիցս հիշատակվող *suse* բառը հետազոտողների կողմից տարբեր մեկնաբանությունների է արժանանում։ Ն. Ադոնցն այն «դռնախորշ»¹ է անվանում, իսկ Հ. Կարապյոզյանը՝ «տաճար»²։ Վերջին տեսակետն էլ արմատավորված է ժամանակակից բիայնագիտության մեջ։ Հ. Կարապյոզյանի համար հիմնավոր կռվան է դիտվում 1956 թ. Արինբերդի պեղումների արդյունքում բացված շինությունը (չափերը՝ 5,5x8,8 մ²), որի մուտքի կողապատերին գտնվող զույգ արձանագրություններում հիշատակվում է *suse* շինությունը։

Հարկ է նշել, որ այս արձանագրություններում *suse* բառից առաջ գտնվող գաղափարագիր ՏՈՒՆ-ը բացահայտիչ է ընկալվում, որի հետևանքով էլ *suse*-ն «տաճար» է ընթերցվում, իսկ Իվարշա դիցանվանը հաջորդող *i-ni* «այս» ցուցական դերանուն։ Այստեղից էլ եզրակացվում է, որ հենց այս շինությունն է *suse*-ն։

Մեր կարծիքով, արձանագրության առաջին տողը, որը վերծանված և թարգմանված է հետևյալ.

D_I-u-ar-sa-a i-ni E_{su}-u-si-e

(Աստված) Իվարշային այս տաճարը... տարբերակով՝ կարելի է կարդալ այլ.

D_I-u-ar-sa-a-i-ni E_{su}-si-e

(Աստված) Իվարշայան ՏԱՆ (տաճարի) *suse*... ձևով։

Մատնանշվող արձանագրության մեջ ներկայացված Իվարշա աստծուն, որը հայտնի չէ բիայնական պանթեոնում, մասնավորապես այս դիցանունը չկա «Միեռի դոան» ցուցակում, կարծում ենք պետք է դասել «ուրիշ լեզուների» աստվածների շարքին։

Հայտնի է, որ Արինբերդ-Էրեբունիում բիայնական գերագույն աստծո տաճարը տեղադրված է պալատական շենքից դուրս, և ըստ այդմ էլ պալատական շենքի վերևում մատնանշվող շինության «տաճար» լինելը ինսեմացներ Խալդիի հեզեմոն նշանակությունը։ Այսինքն, եթե այդ շինությունը իրականում լիներ *suse*-ն, ապա կստացվի, որ Արգիշտի արքան, ապա նաև բերդ-քաղաքի վարչակազմը պաշտամունքում առաջնակարգ նշանակությունը տվել են ոչ թե Խալդիին, այսպիսով նրա

¹ Տես Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 226։

² Տես Յ. Կարապետյան, Սեպագիր տեղանուններ, Երևան, 1998, էջ 117։

տաճարը կառուցելով պալատական շենքից դուրս, այլ օտար Իվարշա աստծուն՝ տվյալ դեպքում սրա տաճարը կառուցելով պալատական շենքի ներսում:

Բացի դրանից Անձավի³, Վանի⁴ արձանագրություններում նշվում են, որ suse-ն Խալդիին է (ձոնգած), իսկ Կոխպանցի⁵, Աշրուտ-Դարգայի⁶ արձանագրություններում suse-ն կրոնական երանգավորում չունի: Դեռ ավելին, Աշրուտ-Դարգայի արձանագրության մեջ հստակորեն երևում է, որ ի տարբերություն սահմանված կանոնադրության մյուս անդամների՝ suse-ի համար գոհաբերություն չի պահանջվում, ինչպես «Սիերի դռան»՝ կանոնադրության մեջ: Այստեղից հետևում է, որ suse-ն կրոնական լինելուց բացի, կարող է լինել նաև աշխարհիկ կառույց: Դրանով իսկ պարզվում է suse-ի երկակի էությունը:

Ի լույսն ասվածի նկատենք, որ «Սիերի դռան» կանոնադրության մեջ բազմաթիվ աստվածներ ունեն Խալդյան suse-ները: Սա կարևոր հանգամանք է: Եթե suse-ն լիներ «տաճար», ապա դրանից կքիսի, որ կանոնադրությամբ գոհեր են սահմանվում Խալդյան տաճարների աստվածներին, որը և ամբողջունելի է:

Երևույթի պարզաբանման համար տեղին է հիշատակել նաև «Սիերի դռան» կանոնադրության մյուս բազմաստված օբյեկտները: Դրանք են.

ա) Որոշ քաղաքներ:

բ) Խալդյան (Խալդիի անունով կառուցած) քաղաքները:

գ) Ուրիշ լեզուները⁸, որոնք ըստ Ադոնցի նվաճված և պետությանը միացված երկրներն են⁹:

Սակայն, մեզ թվում է, որ բիայներենի կրողների համար «ուրիշ (բայց ոչ թշնամի*) լեզուներ» կարող էին համարվել Բիայնիլիում բնակվող (տեղաբնիկ և գաղթեցված), բայց ոչ բիայնալեզու ցեղերն ու ժողովուրդները, որոնց համար որպես իրավական կարգավիճակի ցուցիչ կարող է հանդիսանալ նրանց աստվածներին սահմանվող գոհաբանակի չափը՝ 4 եզ և 18 ոչխար: Նկատենք, որ կանոնադրության համաձայն Խալդին ստանում է 17 եզ և 34 ոչխար, Թեյշեբան՝ 6 եզ և 12 ոչխար, Արդինին՝ 4 եզ և 8 ոչխար¹⁰:

դ) Խալդյան bedisani¹¹ («գավառի» (?))** ուրիշ լեզուները: Նշված օրինակներից պարզ է դառնում, որ բազմաստված կարող են լինել միայն վարչատարածքային և հասարակական (հանրային) միավորները, որտեղից և եզրակացնում ենք, որ հենց հասարակական գործոնի՝ բնակչության առկայությունն է ենթադրում բազմաթիվ աստվածներ ունենալու պայմանը: Այսինքն, suse-ն բնակչություն ունեցող կառույց է՝ բնակավայրի որևէ տեսակ՝ «ավան» կամ «գյուղ» իմաստով: Ավելացնենք նաև այն, որ մի շարք արձանագրություններում օգտագործվում են «հողը ամայի էր, ոչինչ չկար այնտեղ կառուցած» արտահայտությունը: Սա ասվում է այն դեպքում, երբ կառուցվում է քաղաք կամ ամրոց: Արինքերդի փոքրածավալ շինության (5,5x8,8 մ²) արձանագրությունները ևս պարունակում է այս միտքը: Կարծում ենք, որ այդպիսի մի շինվածքի համար հարկ չկա ասելու, որ «հողը ամայի էր», ի տարբերություն լայնածավալ կառույցների, ինչպիսիք են քաղաքը, ամրոցը և այլն:

Մատնանշվող բիայնական suse-ն պահպանվել է Սոս գյուղանվան մեջ: Այստեղ բառամիջի «ս»-ի դիմաց «օ»-ի առկայությունը բացատրվում է.

³ Տես Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 64—65:

⁴ Նույն տեղում, էջ 150:

⁵ Նույն տեղում, էջ 161:

⁶ Նույն տեղում, էջ 151:

⁷ Նույն տեղում, էջ 153:

⁸ Նույն տեղում, էջ 153—154:

⁹ Նույն տեղում, էջ 227:

* Ոչ խառն «թշնամի»:

¹⁰ Տես Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 152:

¹¹ Նույն տեղում, էջ 154, 226:

** Մեր քարզմանությունն է:

ա) Ու-Օ բառբառային հնչյունափոխությամբ
բ) սեպագրային «օ» հնչյունի բացակայությամբ, որը և փոխարինված է «ս»-ով:

Ինչ վերաբերում է suse-ի բառավերջի e/i նշանին, ապա ընդունված է, որ այն դրվում է կիսաձայն «ծ»-ի փոխարեն, որը քիայնեցնում քերևս չի հնչել¹²:

Л. ПЕТРОСЯН

ЭТИМОЛОГИЯ КАРАБАХСКОГО ТОПОНИМА «СОС»

Резюме

В статье определяется сущность бианийского строения “suse”. Учитывая обстоятельство посвященности “suse” многим божествам, обширность территории, а также в некоторых случаях его нерелигиозное значение, выводится, что “suse” – поселение.

L. PETROSIAN

THE ETYMOLOGY OF KARABAKH TOPONYM «SOS»

Summary

The article reveals the essence of Biainian «SUSE». Taking into consideration the facts of SUSE's having a pantheon of deities, its spatial extension as well as non-religious nature, it can be concluded that SUSE is a settlement.

¹² Տե՛ս Ծ. Կարապետյան, Սեպագիր տեղանուններ, Երևան, 1998, էջ 46: